ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունիսի 2013թ. թիվ 106-Ա

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂ» ԿՈՉՈՒՄՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ
ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2013թ. ապրիլի 11-ի թիվ 179 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի առաջարկությունը՝ Լոռու մարզի բուժհաստատություններում, ըստ անվանակարգերի, 2013թ. «Տարվա լավագույն բուժաշխատող» կոչումներ շնորհելու նպատակով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2013թ. «Ստացիոնարի լավագույն բժիշկ» կոչումը շնորհել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկ Հենրիկ Արշակի Մելքումյանին:

2. 2013թ. «Պոլիկլինիկական լավագույն բժիշկ» կոչումը շնորհել «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկ Մանուշակ Ռազմիկի Հակոբյանին:

3. 2013թ. «Պոլիկլինիկական լավագույն բուժքույր» կոչումը շնորհել «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժքույր Անահիտ Վաչիկի Դալլաքյանին:

4. 2013թ. «Ստացիոնարի լավագույն բուժքույր» կոչումը շնորհել «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժքույր Անուշ Հրաչիկի Խաչիկյանին:

5. 2013թ. «Գյուղական ամբուլատորիայի լավագույն բժիշկ» կոչումը շնորհել «Վահագնիի Մ.Քոչինյանի անվան առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի բժիշկ Աշոտ Սերգեյի Հակոբյանին:

6. «Առողջապահության բնագավառում մեծ ներդրում ունեցող բժիշկ» կոչումը շնորհել «Գյուլագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկ Կիմ Կարապետի Ավանեսյանին:

7. Բուժաշխատողի օրվա կապակցությամբ և բարեխիղճ աշխատանքային գործունեության համար ՀՀ Լոռու մարզպետի շնորհակալագրերով պարգևատրել հետևյալ բուժաշխատողներին՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2013թ. հունիսի 21
ք.Վանաձոր